58. ԻՇՈՒ ԴԵՄ ԽԱՂՑԱԾ ԹԱՔԱՎՈՐԸ

Մարթու մեկ կբոռեր.—Տա՛շ սառաֆի յամ, ատամ սառաֆի յամ, աթ սառաֆի յամ[1]։

Թաքավոր լսեց, կանչեց էտ տղին, դրեց տուրմեն։ Մանցին մե ժամանակմ ի, մարթում ի մեկ պզտի խորոտիկ քարմ ի բերեր էր ծախելու։ Թաքավորն առավ էտ քար, օր ուր կշռնոցով օսկի տա։ Տարան, էտ քար դրին կշռքի մե թաթին, օսկին լը լցին մեկել թաթ. խազնեն ինչքան օսկի կար լցին մեկել թաթ, քար գետնեն չկտրավ։ Թաքավոր զարմացավ, թե պզտի քար խազնեն տարավ, էլի գետնեն չկտրավ։

Ըսեց.—Կանչե՛ք էն մարթուն, որ կըսեր՝ «Քարից կհասկընամ»։

Բերեցին էտ մարթուն, վերուց էտ քարը, իշեց, թքուց քարու վրեն, թաբըլցուց հողի մեջ, նորեն դրեց կշեռքի թաթ։ Օսկին դարգըկել տվեց կշեռքի թաթեն, թողեց հինդ հատ օսկի. քարի թաթը թռավ հ'ելավ։ Թաքավոր զարմացավ։

Մարթն ըսեց.— Թաքավորն ապրած կենա, էսի օր կա, քար չէ, իդա իսանի աչք է. ինչքան օր էղնի, չկշտանա իսանի աչք. կուզե օր գեննա էղնի։ Իսանի աչք մե լուփմ ի հողով կքոռնա. էտոր համար լը ես տզկեցի, հողոտեցի, կշտացուցի։

Օսկին տվեց քարի դիմաց, քարն առավ ու ըսեց.—Տարեք էտ մարթուն գենա դրեք տուրմեն։

---

1 *Քարից հասկացող եմ, մարդուց հասկացող եմ, ձիուց հասկացող եմ (Ծ. Բ.)։*

Տարան դրին տուրմեն։

Կեցան մեկ ժամանակմ ի, թաքավորի մեկ յոթ հատ ձի էր օղորկի էտ թաքավորին։ Էտ ձիանը յոթը լը մեկ տեսակի ձի են. չըն ջոկվեն իրարուց, թե ո՛րն է մեծ, ո՛րն է պզտիկ։ Յոթ լը ինչ օր մեկ ինձորմ ի օրթլխեն կիսիս, մեկ ֆասոնի, մեկ ֆոռմի ին։

Ձիան օղորկող թաքավոր ըսեր էր, օր իտը ամեն ձիան պըտի գինաս ո՛յն է մեծ, ո՛յն է պզտիկ։ Թե չը գիտցար, կռիվս ի կռիվ է։ Էտ թաքավոր լե ինչքան օր պրիֆեսորներ ուներ, կանչեց բերեց, բանմ ի չհասկըցան։

Թաքավոր ըսեց.— Կանչեք էն մարթուն օր կըսեր՝ «Ձիուց հասկացող իմ»։

Գացին, տուրմից հանին բերին էտ մարթուն։ Էտ մարթն էկավ տեսավ ձիանուն, ըսեց.— Թաքավոր, էտ ձիան տարեք յոթն օր կերակլեք, ջուր հեչ մի տեք խմելու։

Տարան էտմալ էրեցին։ Նորեն գնաց էտ մարթ, ձիան բերեց ծով ջրելու։ Որն օր մեծ էր քուլլընուց, էնիկ գլուխ կոխեց հարի անգճներ ջրի մեջ ու խմեց. էնուրից պզտիկ քըշումի քիչ, վերջապես քուլլընուց պզտիկ մռթներն դրեց ջրի վրեն, խմեց։

Մարթն ըսեց.— Քուլլընուց մեծն իդա է, օր հարի անգճներ գլուխ կոխեր է ջրի մեջ, քուլլընուց պզտիկ լը իգա է, օր մռթներ դրեր է ջրի էրեսն ու կը խմե։

Թաքավորն ամեն ձիան տարին գիտցավ, ըսեց.—Տարեք էտ մարթուն գենա դրեք տուրմեն։

Մարթուն օր առան գացին տուրմեն, թաքավորն ամեն ձիուն իրան տարին գրեց ուրանց վրեն, օղորկեց էն թաքավորին։

Էտ վախտն ըսեց.— Գացեք, էտ մարթուն բերեք։

Գացին էտ մարթուն տուրմից հանին, առան էկան։

Թաքավորն ըսեց.— Այ մա՛րթ, օր դու քարուց հասկըցար, ձիուց հասկրցար, կըսեր օր մարթուց լը կը հասկընամ. ըսե՛, ես ի՞մալ մարթ իմ։

Ըսեց.— Թաքավոր, դու իշու պես մարթ իս։

Ըսեց.— Ես հ՚օրի՞ եմ իշու պես մարթ։

Ըսեց.— Էնոր համար, օր դու սա՞ղ խազինեդ կիտեր, մեկ քարմ ի պըտի առներ, բայց ես՝ հինգ օսկով, գենա ըսիր՝ «Տարեք գրեք տուրմեն»։ Էտև էտ ձիանն օր օղորկած էն, հեչ մարթ չգիտցավ էտոնց պատասխան գտնալ, ես գտա, գենա ըսիր՝ «Տարեք դրեք տուրմեն»։ Էտուր համար կըսիմ օր դու իշու պես մարթ իս։ Թե չըս

հա՜վատա, կանչե գա մամուդ, հարցու՝ դու իշու դեմ խաղցե՞ր իս, թե՞ չէ։

Թաքավոր կանչեց ուր մամուն, ըսեց.— Մա, ես իշու դեմ խաղցե՞ր իմ։

Ըսեց.— Օղորթը, դու իշու դեմ իս խաղցե։ Ես քըղի էրկու հոգով ենք, դուրս հ'ելա, բոշեքն իշվներով էկած էն։ մաղ կը ծախեն, էտ վախտ դու փորուս մեջ խաղցար իշու դեմ։

Իտ անգամ թաքավորն մարթուն աղատեց տուրմից, հ'ելալ գնաց։